ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 139

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով,ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններով, քանի որ 2018թ-ին կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ » ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, չափագրման համաձայնությունը և 2024SNMZF6 (29.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լոռու մարզ, համայնք Լերմոնտովո, Լերմոնտովո բնակավայր, 3-րդ փողոց, 21 հասցեում գտնվող 06-043-0229-0001 կադաստրային ծածկագրով 0,10792 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի ճշտված և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Օրինականացնել Լոռու մարզ, համայնք Լերմոնտովո, Լերմոնտովո բնակավայր 3-րդ փողոց, թիվ 21 հասցեում գտնվող՝ Սուսան Լևոնի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական02112023-06-0057) 06-043-0229-0001 կադաստրային ծածկագրով 0,10792հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում վերջինիս կողմից ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական

նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2018թ-ին կառուցված ընդհանուր 241,5 քմ արտաքին չափերով հասարակական սպասարկման օբյեկտը :

3.Պարտավորեցնել Սուսան Լևոնի Վարդանյանին(հաշվեհամար՝ 900235002012 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2018թ-ին կառուցված ընդհանուր 241,5 քմ արտաքին չափերով հասարակական սպասարկման օբյեկտի օրինականացման վճար՝ 496524ՀՀ դրամ :

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 140

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Կառաջարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի ՝՝Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին՝՝ N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Լոռի-1 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանու 06.09.2024թ. թիվ 22-Ա որոշումը,ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը,ՀՀ Լոռու մարզպետի 2025թ. մարտի 13-ի թիվ 130-Ա որոշումը, հաշվի առնելով քաղաքացի Լիանա Կիրակսի Հարությունյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Լիանա Կիրակսի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 06-026-0006-0058 կադաստրային ծածկագրով 0.3526հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակությունը փոփոխել և փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, համապատասխանեցնելով Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 141

ՍՈՒՍԱՆ ԼԵՎՈՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՀ ԼՄ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականի նքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 13 մարտի 2025 թ. թիվ 130-Ա որոշումը, Լերմոնտովո համայնքի ավագանու 06 սեպտեմբերի 2024 թվականի N 22-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ » ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, չափագրման համաձայնությունը և 2024RXHUBB (29.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լերմոնտովո համայնքի սեփականության հանդիսացող 06-043-0300-0002,0003,0004 կադաստրային ծածկագրերից 0,30545 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,30545 հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և հողամասի վրա կառուցված 255,96 ք/մ ներքին մակերեսով հասարակական նշանակության շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համյանքի սեփականության իրավունքը Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 06-043-0300-0002,0003,0004 կադաստրային ծածկագրերից 0,30545 հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) կողմից հողամասի վրա 2018թ-ին ինքնակամ կառուցված 255,96 ք/մ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

4.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) կողմից 2018թ-ին ինքնակամ կառուցված 255,96 ք/մ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունները:

5.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովա համյանքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 142

ՍՈՒՍԱՆ ԼԵՎՈՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականի նքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 13 մարտի 2025 թ. թիվ 130-Ա որոշումը, Լերմոնտովո համայնքի ավագանու 06 սեպտեմբերի 2024 թվականի N 22-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ » ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, չափագրման համաձայնությունը և 2024MNDEDF (29.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լերմոնտովո համայնքի սեփականության հանդիսացող 06-043-0229-0002 կադաստրային ծածկագրերով 0,02479հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 0,02479հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և հողամասի վրա կառուցված 0,01քմ ներքին մակերեսով հասարակական նշանակության շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

3. Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համյանքի սեփականություն հանդիսացող 06-043-0229-0002 կադաստրային ծածկագրերով 0,02479հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության հողամասի և Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) կողմից հողամասի վրա 2018թ-ին ինքնակամ կառուցված 0,01քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

4.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Սուսան Լևոնի Վարդանյանի (ծնված՝ 24.01.1951թ.) կողմից 2018թ-ին ինքնակամ կառուցված 0,01քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունները:

5.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ, ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համյանքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**